
ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԴՈՒՍՏՐԸ. ՆՈՐԱՅԱՅՏ ԷԶԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ*

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Նվարդ Թումանյան, Ե. Չարենց, Հ. Աճառյան, Ս. Գորոզեցի, Սվ. Իսահակյան, Վ. Տերյան, Մ. Վարդապետյան, Հովնանյան դպրոց, օրագրեր, հուշեր, բանաստեղծություններ նվիրված Նվարդին, «Մծիրի», Թարգմանություն, ազդեցություն, գրական «Քառյակ», «Հինգշաբթիներ»:

Նախաբան

Անվանի անձանց կենսագրությունը մշակութաբանության ամենահին ու փորձված մեթոդներից է, որը հնարավորություն է ընձեռում լուսարանել ոչ միայն տվյալ անհատի կյանքը և գործը, այլև բացահայտել նրա ժամանակն ու հասարակական միջավայրը: Այս խմատով մեր բազմադարյան մշակույթի պատմության մեջ առանձնահատուկ է Հովհաննես Թումանյանի կենսագրությունը, որն անբաժանելի է իր բազմաանգամ ընտանիքի կյանքից: Բանաստեղծը տասը զավակների հայր էր, և նրա ընտանիքի պատմությունը, չորս որդիների նահատակությունը՝ Եղեռնի ու ստալինյան բռնապետության տարիներին, նրա դուստրերի ազդանվեր գործունեությունը XX դարի առաջին տասնամյակներին հայ ժողովրդի պատմության մանրանկարն է:

Նվարդ Թումանյան. մանկությունն ու երիտասարդությունը

Հովհ. Թումանյանի տասը զավակների մեջ հայ մշակութային-հասարակական կյանքում ունեցած դերով և հատկապես Թումանյանագիտությունը մատուցած իր անգնահատելի վաստակով առանձնանում է նրա երրորդ զավակը, երկրորդ դուստրը, բանասիրական գիտությունների թեկնածու, Թումանյանագետ Նվարդ Թումանյանը (03. 10. 1892 – 20. 09. 1957), որի կյանքն ու գործը հափազանց ուսանելի է և հետաքրքիր ոչ միայն իրրե բանաստեղծի դասեր, այլև իրրե մարդու, քաղաքացու, հայ մտավորական կնոջ ու գիտնականի, անձնագոհ և հայրենանվեր հայուհու, իրրե հայ մշակույթի երախտավորի:

Նվարդը ծնվել և մեծացել էր Թիֆլիսում, սակայն իր հայրիկի նման ուներ հայրենի բնության պաշտամունք: Իր օրագրերում համեմատելով Թիֆլիսում և Դսեղում անցկացրած մանկության օրերը՝ նա գերապատմությունը տալիս էր գյուղում անցկացրած օրերին, որոնք ավելի պայծառ ու անհոգ էին,

* Ներկայացվել է 16. IV. 2021 թ., գրախոսվել է 12. V. 2021 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2021 թ.:

թերևս, ամենից առաջ բնությանը մոտ լինելու պատճառով. «Գնում էինք գյուղը և անմիջապես ընկնում բնության գիրկը»¹:

Միջնակարգ կրթությունը Նվարդը ստացել է Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց դպրոցում: Մանկությունից նա աչքի էր ընկնում ընթերցասիրությամբ: Դպրոցում ղեկավարում էր գրական խմբակը: Անշուշտ, թե՛ բնության, թե՛ գրքի նկատմամբ սերը Նվարդը ժառանգել էր հայրիկից: Շատ վաղ հասակից, բացի «հայրիկից ստացած» գրքերից, Նվարդն օգտվում էր Թիֆլիսի Վելյամինովսկայա փողոցի վրա գտնվող հին ու հայտնի գրադարաններից. «Գիրք շատ էի կարդում և շատ արագ: Ամեն օր գրադարան էի գնում գիրքս փոխելու» (ՆԱ, 1, 1/27): Կրթության ու գրքի արժեքի գիտակցումը եղավ բանաստեղծի դասեր կյանքի մշտական ուղեկիցը:

Ձափազանց արվեստասեր հոգի ուներ պատանի Նվարդը: Նա սիրում էր երգել. երգում էր իր հայրիկի կազմակերպած խնջույքներին, ընկերական երեկույթներում, երգում էր բնության գրկում, բայց ավելի շատ՝ տանը, երբ ազատ էր լինում և միայնակ: Հովնանյան դպրոցի 4-րդ դասարանին գուգահեռ՝ Նվարդը հաճախում էր Թիֆլիսի նկարչական դպրոցը: Սիրում էր քանդակագործություն, պարել՝ «ամենից շատ վալս, խենթ ու խելառ վալս» (ՆԱ, 1, 1/44): Երաժշտության ուսուցիչներն էին Գրիգոր Միրզոյանը², 3–5-րդ դասարաններում, Ռոմանոս Մելիքյանը՝ 7-րդ դասարանում: Նկարչական դպրոցում դասավանդում էր Եղիշե Թադևոսյանը:

Հարուստ և հետաքրքիր էին Նվարդի ուսանողական տարիները՝ 1910-ական թվականները, որոնք թեև ծանր ու դժվարին էին, այնուամենայնիվ, նրա կյանքի ամենաերջանիկ շրջանն էր, երբ ապրում էր լիաթոք կյանքով: «Որքան էլ տարօրինակ թվա, – գրում է Նվարդը, – կյանքիս ամենատուրախ, ամենազվարթ և հարուստ տարիները ուսանողական շրջանն է եղել՝ 1914–1921 թթ.: Թեև հինգ տարվա կուրս էր, բայց ես նյութականի պատճառով 1917 թ. համալսարանը համարյա թե թողի և հայրիկին օգնելու համար, համալսարանի ուսման վարձը 125 ռ. վճարելու համար. 1917–1920 թթ. Հովնանյան դպրոցում ընդհանուր պատմության դասեր վերցրեցի» (ՆԱ, 1, 1/57): Դպրոցն ավարտելուց հետո բարձրագույն կրթական հաստատություն ընդունվելու համար անհրաժեշտ էր գիմնազիայի վկայական: Մի ամբողջ տարի մասնավոր պարապելով՝ հաջողությամբ հանձնում է էքստեռն քննություններ 3-րդ իգական գիմնազիայում, ընդունվում Կանանց բարձրագույն

¹ Թումանյանի ընտանեկան արխիվ, Ն. Թումանյանի ինքնակենսագրական նյութեր, բաժին 1, թիվ 1/23: Ն. Թումանյանի արխիվը Հովհ. Թումանյանի ընտանեկան արխիվի մի մասն է: Դրա մի փոքր մասն իր անձնական արխիվի հետ մեզ է տրամադրել բանաստեղծի կրտսեր դուստր Թամար Թումանյանը (10. 05. 1907, Թիֆլիս – 19. 09. 1989, Երևան) դեռևս 1989 թ.: Ընտանեկան արխիվի այն փոքր մասը, որը գտնվում է մեր տրամադրության տակ, որոշ չափով մշակել ենք և բաժինն ու թվահամարը կնշենք տեքստում՝ ՆԱ (Նվարդի արխիվ), բաժնի համարը, թղթապանակը և էջահամարը, իսկ անմշակ մասերը կհղենք ԹԸԱ (Թումանյանի ընտանեկան արխիվ) հապավումով:

² Գրիգոր Հովհաննեսի Սյունի (Միրզոյան) – (1876, Գետաբեկ, Ելիզավետպոլի գավառ, Ելիզավետպոլի նահանգ, Ռուսական կայսրություն–1939, Ֆիլադելֆիա, Փենսիլվանիա, ԱՄՆ), կոմպոզիտոր, խմբավար, երաժշտագետ:

կուրսեր (Հետագայում՝ Թբիլիսիի Անդրկովկասյան Համալսարան) և ավարտում պատմագրական ֆակուլտետը: Նվարդը երազում էր կրթությունը շարունակել և հայագիտություն ուսանել Պետերբուրգում: Այդ նպատակով սովորում էր լեզուներ՝ լատիներեն, վրացերեն, ֆրանսերեն, գրաբար, արաբերեն: Սակայն, ինչպես նշում է իր օրագրում, «Հայրիկը դեմ էր իմ Պետերբուրգ գնալուն, և երբ խոսք էր լինում, ասում էր. «Մեր տունը քեզ համալսարան»։ Գլխավոր պատճառը, իհարկե, նյութականն էր. «կա ոչը», բայց չէր ասում, ցույց չէր տալիս» (ՆԱ, 1, 1/ 60): Նվարդն անվերջ իր հայրիկի հետ էր շրջապատված հայ և այլազգի մշակույթի գործիչներով, երաժիշտներով, նկարիչներով, ինչը մեծագույն բերկրանք էր թումանյանի արվեստասեր դասեր համար: Նվարդն ինքն է խոստովանում, որ այդ շրջանում «Ինքս էլ առողջ էի, գվարթ, թուշուն և ամեն ինչով հետաքրքրվող ու ապրող» (ՆԱ, 1, 1/ 52): Նա մտերիմ էր «Վերնատան» բոլոր անդամների հետ և այդ բարեկամությունը շարունակեց մինչև կյանքի վերջ: Այս ամենի շնորհիվ բանաստեղծի դուստրը դարձավ իր ժամանակի զարգացած կանանցից մեկը: Ամենայն հայոցի ընտանիքում այլ կերպ լինել չէր կարող: Որպես հայր՝ թումանյանը ոչ միայն ժպտում էր զավակներին ու կատակներ անում, այլև հարկ եղած դեպքում խստորեն պահանջում. «Բանը մի անգամ կասեն», կրկնել է նա. «Եթե ասաց՝ չէ, դա օրենք էր մեզ համար», – գրում է ավագ դուստրը՝ Աշխենը³:

Նվարդը երիտասարդ հասակից աչքի էր ընկնում ազգային կյանքին գործուն մասնակցությամբ, հասարակական ակտիվ վարքագծով: 1915 թ. Թիֆլիսում «Հայ օրիորդների կոմիտեի» ամենագործունյա աչքի ընկնող անդամներից էր: 1917 թ. նրա նախաձեռնությամբ Թիֆլիսում կազմակերպվեց «Հայ ուսանողական կուլտուրական միություն»: Եվ նույն թվին, որպես ընկերություն նախագահ, նա մեկնում է Բաքու՝ ուսանողական համագումարին մասնակցելու համար⁴: 1918-ին, իբրև այդ միություն անդամ, Նվարդն ակտիվորեն մասնակցում էր ուսանողական հավաքույթներին, դասախոսություններ կարդում «Կրթություն»⁵ «Հայ կինը ժողովրդական երգերի մեջ» և այլ թեմաներով: Նա համագործակցում էր նաև Թիֆլիսի «Փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեի» հետ: Ցեղասպանության տարիներին ազգային կյանքի վայրկյաններում Նվարդն իր հայրիկի կողքին էր: 1915 թ. Էջմիածնում էր և համաճարակի պայմաններում կյանքն էր վտանգի ենթարկում հայ որբերին խնամելիս, փրկում էր մանկական կյանքեր⁶: Նրա օրագրի էջերից

³ Աշխեն. Հուշեր և ընտանեկան պատմություններ, Երևան, 2011, էջ 60:

⁴ Բաքվում Նվարդն ապրում էր պատմաբան Հակոբ Մանանդյանի տանը: Այստեղ էլ նա ծանոթանում է Հովհաննես Հովհաննիսյանի հետ, որի հանդեպ մեծ համակրանք ուներ: Ի դեպ, Հետագայում Նվարդը փորձել է գրել Հովհ. Հովհաննիսյանի կենսագրությունը, նրա մահից հետո անգամ հետաքրքրվել է բանաստեղծի գերդաստանի պատմությամբ, գրի առել նրա կյանքին վերաբերող զանազան նյութեր:

⁵ Տե՛ս «Մշակ» (Թիֆլիս), 24. XI. 1918, «Հորիզոն» (Թիֆլիս), 24. XI. 1918:

⁶ Նվարդի հետ գնացել էին երեք ընկերուհիներ, որոնց անունները հրապարակված էին «Հորիզոն» օրաթերթի 1915 թ. օգոստոսի 9-ի հայտարարության մեջ. «Հայկական կենտրոնական կոմիտեն Էջմիածին ուղարկեց օր. օր. Ն. Թումանյանին, Ա. Դանիելյանին, Հ. Զորյանին և Կ. Լիանոզյանին, որոնք սիրահոժար և ինքնակամ հանձն են առել առանց վարձատրության գործել փախստականների կարիքները

մեկում կարողում ենք. «Ինձ վրա շատ էր ազդում որք երեխաների, դժբախտ, չքավոր մանուկների կյանքը»: Նվ երիտասարդ հայուհին որոշում է միշտ «օգնել այդ տեսակ երեխաներին» (ՆԱ, 1, 1/26):

1918 թ. մայիսին Նվարդը Ղարաքիլիսայում էր, դարձյալ իր հայրիկի կողքին, երբ արդեն սկսվել էր գաղթը, քաղաքը երեք կողմից շրջապատված էր թշնամիներով: Այս անգամ Թումանյանը փորձում է համոզել դատերը հեռանալ ամենքի հետ, բայց չի կարողանում: Նվարդը վճռական էր՝ պատրաստ ուղղակի գործողությունների մինչև վերջին պահը մնալ իր հայրիկի հետ և օգնել քաղաքից հեռացող գաղթականությանը⁷:

Գրական շրջանը

Առհասարակ Նվարդն իր բանաստեղծ հայրիկի բոլոր բարեկամների հետ ընկերական ջերմ հարաբերություններ ուներ կամ զավակի խոնարհ հարգանք ու ակնածանք: Նա միշտ հավատարիմ մնաց Թումանյանի գրական միջավայրի յուրաքանչյուր ներկայացուցչի և մինչև կյանքի վերջը պահպանում էր կապն ամենքի հետ: Բարեկամների թվում էր այդ տարիներին Թիֆլիսում ապրող ուսուցիչ, հրապարակախոս Սերգեյ Գորոդեցկին⁸: Նվարդի հետ Գորոդեցկին մտերմացավ Առաջին աշխարհամարտի տարիներին՝ 1916 թ. գարնանից: Այդ բարեկամությունը շարունակվեց նաև խորհրդային շրջանում: Հայ բանաստեղծի անձնուրաց հայրենասիրությունը աչքի ընկնող դատեր նկատմամբ ուսուցիչ բարեկամական վերաբերմունքի վկայությունն են Թումանյանին ուղղված Գորոդեցկու նամակները, որոնցում հաճախ հիշա-

հոգալու համար» (ընդգծումները մերն են.՝ Ս. Հ.): Որոշում կար նաև Նվարդի ղեկավարությամբ խումբ գործուղել Իգդիր: Սակայն օգոստոսի 9-ից մի քանի օր անց որոշվել էր նրան ոչ թե էջմիածին ուղարկել, այլ Իգդիր. այդ է վկայում վերոբերյալ հայտարարությունից 5 օր անց՝ օգոստոսի 14-ին, լրագրում հայտնված «Փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեի» մեկ այլ հայտարարություն, ըստ որի՝ Նվարդն իբրև գաղթականներին օգնող խմբի ղեկավար, պետք է մեկներ Իգդիր: Հայտարարության մեջ ասվում էր. «Ի նկատի ունենալով ինտելիգենտ ուժերի կարիքը փախստականներին օգնություն հասցելու գործում, Հայկական կենտրոնական կոմիտեն կազմակերպել է 3 խումբ: Առաջին խումբը, որ գործելու է Իգդիրում, բաղկացած 6 հոգուց, կազմված հայ օրիորդների կոմիտեի ներկայացուցիչներից, ղեկավարությամբ օր. Ն. Թումանյան ... Երկրորդ խումբը էջմիածնում օր. Քալանթարյանի ղեկավարությամբ, երրորդ խումբը Դիլիջան՝ բժ. Շաքմաճյանի և բժ. Թումանյանի առաջնորդությամբ»:

⁷ Ն. Թումանյան. Հուշեր և գրույցներ, Երևան, 1987, էջ 164:

⁸ Նրա և Հովհ. Թումանյանի առնչակցությունների հարցերին հայ գրականագիտությունն անդրադարձել է բազմիցս՝ հանձինս Իրմա Սաֆրազբեկյանի և Անուշավան Զաքարյանի [տե՛ս С. Городецкий. Последний крик. Состав. автор предисл. и коммент. Ирма Сафразбекян. Ереван, 2010; ինչպես նաև՝ Ս. Գորոդեցկի. Վերջին ճիշդ, ներածությունը գրեց, կազմ. և ծանոթ. Ի. Սաֆրազբեկյանը, Երևան, 2010, էջ 5–18, Ա. Զաքարյան. Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914–1920), Երևան, 1984, էջ 144, 820–823, նույնի՝ Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Երևան, 2010, նույնի՝ Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916–1921 гг.). Ереван, 2015]:

տակվում է նաև Նվարդի անունը: 1919 թ. մայիսի 6-ին բանաստեղծին ուղղված նամակում Գորոդեցկին գրում է.

«Հարգելի Հովհաննես Փաղեկի:

... Ձմռանաք այսօրվա երեկոյի մասին: Խնդրում ենք Նվարդին էլ բերեք»⁹:

Իսկ Գորոդեցկին, չհամարձակվելով իր սիրո մեծությունը բանաստեղծի հանդեպ համեմատել Նվարդի՝ հոր հանդեպ ունեցած քնքշանքի ու պաշտամունքի հետ, Թումանյանի մասին բանաստեղծությունը նվիրում է հենց Նվարդին՝ իրենց ծանոթությունից 30 տարի անց՝ 1949 թ. հունիսի 20-ին, Մոսկվայից.

НВАРД ТУМАНЯН

Твою любовь сравнить не смею
С моею нежностью к нему,
Но песнь спою я, как умею,
Его таланту и уму.
Он был глашатаем свободы,
Когда над миром мрак стоял,
И все кавказские народы
К содружеству с Россией звал.
Как быстро годы пронеслися!
Как много унеслось друзей!
Так пусть откроется в Тбилиси
Наш Ованесовский музей!¹⁰

1949 թ. սեպտեմբերի 20-ին Գորոդեցկին Նվարդին գրում է. «Համբուրում եմ ձեռքերը, որոնք ինձ և Հովհաննեսին սուրճ էին մատուցում փոքր սենյակում, որտեղ մեծ մտքեր էին սավառնում»¹¹:

Հովհ. Թումանյանի կյանքի նորահայտ վավերագրեր

Նվարդը որպես հարազատ էր ընկալվում բանաստեղծի բոլոր մտերիմների համար: Նրանց թվում առաջիններից էր Թումանյանի սրտակից ընկերներից մեկի՝ Փիլիպոս Վարդազարյանի (Ֆիլիպ)¹² ընտանիքը: Այդ բարեկամության շարունակականությունը հավաստող վավերագիր է նրա քրոջ՝ Մարուսյա

⁹ Հայաստանի Հանրապետության Գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, №1105 (297):

¹⁰ Բանաստեղծությունը պահվում է ԹԸԱ-ում, ՆԱ-ում՝ Մոսկվայից Նվարդին հասցեագրված 1949 թ. հունիսի 20-ի նամակում (ՆԱ, 5, 80):

¹¹ Ի. Ս ա ֆ Ր ա զ Ե կ յ ա ն. Թումանյանի ընտանիքի կյանքի էջերից, Երևան, 2009, էջ 200:

¹² Փիլիպոս Հակոբի Վարդազարյան (1858, պատմական Գողթն գավառի Ներքին Ագուլիս գ. – 1935, Թիֆլիս) – հրատարակիչ, գործարար, մշակութային գործիչ, Թումանյանի մտերիմ բարեկամն ու մեկենասը: Ընկերական շրջանում նրան ասում էին Ֆիլիպ: Չլինելով մասնագետ քննադատ՝ Փիլ. Վարդազարյանը դարձավ Թումանյանագիտական առաջին մենագրության հեղինակը [«Վչտի և թախծի երգիչ Հովհաննես Թումանյան (քննադատական փորձ)», Թիֆլիս, 1905]:

Վարդապարտյանի՝ Նվարդին հասցեագրված նամակը¹³, որը վկայում է, թուամանյանի՝ ինչպես Ֆիլիպի ընտանիքի հետ ունեցած բարեկամության, այնպես էլ բանաստեղծի կենսագրական մանրամասների, որոշ երկերի ստեղծագործական պատմության, գրողի՝ թարգմանության սկզբունքների ու մոտեցումների մասին: Բանաստեղծը հպարտ էր Ֆիլիպի հետ իր բարեկամությանը: Նամակներից մեկում գրում է. «Ես հաստատ գիտեմ, որ մեր գրականության մեջ ոչ մի գրող էդպես ընկեր չի ունեցել ... Ամեն փողոցում Ֆիլիպ չի ապրում»¹⁴: Փիլ. Վարդապարտյանին է նվիրված թումանյանի «Ընկերիս» և «Երկու սև ամպ» բանաստեղծությունները¹⁵: Թումանյանագիտության անհայտ Մարուսյա Վարդապարտյանի այս նամակը ներկայացնում ենք ամբողջությամբ.

«Սիրելի Նվարդ:

Ես վաղուց եմ ստացել քո նամակը, սակայն միայն այժմ եմ պատասխանում, քանի որ շարունակ կարծում էի, որ գալու ես, բայց դու չեկար: Թանկագին, թումանյանի մասին իմ հիշողությունները շատ են, բավական շատ. նրա թարգմանական գործերից շատերը թարգմանվում էին մեր տանը, հայրիկդ այն ժամանակ դեռևս վատ էր տիրապետում ռուսերենին: Կուցովի տողի — «Сяду я за стол да подумаю» — մասին ասում էր՝ հայ գյուղացին երբեք սեղանի շուրջ չէր մտորում, այլ տեղավորվում էր որևէ պատի տակ մի անկյունում¹⁶: «Մծիրին» նույնպես մեզանում չէր թարգմանվել¹⁷: Պուշկին-

¹³ Ինքնագիրը պահվում է ԹԸԱ-ում, ՆԱ-ում: Նամակը ռուսերեն է և թվագրված չէ. հավանաբար գրվել է 1950-ականների առաջին տարիներին, երբ Նվարդը դիմում էր ամենքին և ամենուր իր հայրիկի մասին հուշեր ու զանազան այլ նյութեր ձեռքբերելու համար ոչ միայն որպես դուստր, այլ որպես թումանյանի գիտական առաջին հրատարակության պատասխանատու քարտուղար:

¹⁴ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լրակատար ժողովածու 10 հատորով (այսուհետ՝ ԵԼԺ), հ. 10, Երևան, 1999, էջ 36–37:

¹⁵ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 1, Երևան, 2018, էջ 216, 167:

¹⁶ Մ. Վարդապարտյանը նկատի ունի ռուս բանաստեղծ Ալեքսեյ Կուցովի «Գեղջուկի մտածմունքը» բանաստեղծության թարգմանության առիթով թումանյանի խոհերը, որոնք արտահայտվել են նաև Փիլ. Վարդապարտյանին ուղղված բանաստեղծի 1900 թ. սեպտեմբերի 27-ի նամակում, որտեղ նա հիմնավորում է իր մոտեցումը. «Անցյալ օրը տեղում (առավոտը) «Сяду я за стол» — ուղարկեցի «Տարագին» ... СТОЛ-ը չի եղել եմ գիտե՞ս ինչ — պատի տակ, և այս ոչ թե հանգի համար, այլ ավելի լուրջ խորհրդով ... Խեղճ հայ մարդու տարակուսանքի ու մտածմունքի տեղը պատի տակն է» (Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 9, Երևան, 1997, էջ 235):

¹⁷ Թումանյանը Լեոմոնտովի «Մծիրի» պոեմը թարգմանել է 1890-ական թվականներին և առաջին անգամ առանձին գրքով, ընդ որում՝ Փիլ. Վարդապարտյանի հովանավորությամբ, լույս է տեսել 1896 թ.: Սակայն այն չէր գոհացնում թարգմանչին և իր կյանքի ընթացքում մերթնդմերթ անդրադարձել է իր թարգմանությանը: Այն վերամշակել է 1908 թ. Բաքվի «Բանաստեղծություններ» ժողովածուի հրատարակության նախապատրաստական շրջանում, երբ պոեմի թարգմանության խնդիրները քննարկում էր հրատարակիչներից Մխիթար Տեր-Անդրեասյանի և Երվանդ Թադևոսյանի հետ: Սակայն «Մծիրին» դուրս մնաց Բաքվի ժողովածուից, և թումանյանը մտադիր էր վերստին անդրադառնալ Լեոմոնտովի պոեմին: Իր վերջին ժողովածուում («Բանաստեղծություններ», 1922) թումանյանը դարձյալ չներառեց «Մծիրին»՝ համարելով այն դեռևս մշակման արժանի:

ներն ու Լերմոնտովին նա պաշտում էր և ընդօրինակում էր նրանց¹⁸: Ես հիշում եմ, ինչպես էր նա շարունակ ուզում պարզել՝ արդյոք ինքը բանաստեղծ է, քանի որ նրան քաշքշում ու բզկտում էին մի կողմից տերտերը¹⁹ անպատճառ ուզում էր նրան իր իրավահաջորդը դարձնել, իսկ մյուս կողմից նա գգում էր, որ դա չէ իր կոչումը: Ես հիշում եմ երբ Ֆիլիպը, այն ժամանակ «Մուրճի» հրատարակիչը, առաջին անգամ բերեց նրան մեր տուն, նա մի ամոթխած պատանի էր, որն ամաչում էր, որ վատ էր տիրապետում ռուսերենին, սակայն շատ արագ էր յուրացնում այն ամենը, ինչ մենք նրան թարգմանում էինք, իսկ մենք հիանում էինք, որքան հեշտ էին նրան տրվում հանգերն ու որքան գեղեցիկ էին հնչում բանաստեղծությունները²⁰: Քաջագունուն²¹ և Տիգրան Հովհաննիսյանը²² նրա լավագույն գրաքննադատներն էին, հավաքվում էին այն ժամանակ հինգշաբթի օրերը²³: Թե ինչ է նա ասել Բելինսկու մասին, ես չեմ հիշում:

Ո՞ր լեզվով է գրվելու քո ատենախոսությունը²⁴: Ինձ համար շատ հետաքրքիր կլինի այն կարդալ: Հա, իմիջիայոց, քո նամակում երկու սխալ կար,

¹⁸ Կարծում ենք, որ Մարուսյան ճիշտ բնորոշում (подражал) չի գործածում: Թումանյանը ոչ թե փորձել է նմանվել նրանց, այլ խոստովանել է Պուշկինի և Լերմոնտովի ազդեցությունն իր ստեղծագործական կյանքի սկզբնական շրջանում: Յու. Վեսելովսկուն ուղղած նամակում բանաստեղծը գրում է. «Նրանք դրել են ինձ ու տվել պոեմայի այն ձևը, որով գրել եմ ես ... որովհետև մեր գրականության մեջ այդ տեսակ պոեմ չի եղել: Սակայն այն էլ ասեմ, որ նրանց ազդեցության տակ ես միայն սկսել եմ» (Հ. Դ. Վ. Թ. ու մ. ա. ն. յ. ա. ն., ԵԼԺ, հ. 9, էջ 383–384):

¹⁹ Տերտերը Թումանյանի կնոջ՝ Օլգայի խորթ հայրն էր՝ ավագ քահանա Տեր-Հովհաննեսը, Թիֆլիսի հայոց կոնսիստորիայի անդամ, կրոնի ուսուցիչ Հովհաննես Մարտիրոսյանը (1850, Շուշա — 1921, Թիֆլիս): Տեր-Հովհաննեսն Օլգային ամուսնացնելիս պայման էր դրել՝ Թումանյանը քահանա դառնա, քանի որ արու ժառանգ չունենա և փափագում էր բանաստեղծին դարձել իր թեմերի ժառանգորդը:

²⁰ Փիլ. Վարդապարյանն ու Թումանյանը ծանոթացել են 1891 թ. «Մուրճի» խմբագրատանը, հետևաբար, Թումանյանի ռուսերենի թերի խմացությունը վերաբերում է 1890-ական թվականների առաջին տարիներին: Ավելի ուշ նա հիանալի էր տիրապետում ռուսերենին՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքին:

²¹ Խոսքը քաղաքական գործիչ, Անդրկովկասի սեյմի անդամ, Հայաստանի առաջին Հանրապետության առաջին վարչապետ, ճարտարապետ Հովհաննես Մամեդյանի Քաջագունուն (Տեր-Հովհաննիսյան, 1867, Ախալցխա — 1938, Երևան) մասին է:

²² Տիգրան Ներսեսի Հովհաննիսյան (1865, Թիֆլիս — 1921, Երևան) — թարգմանիչ, գրական գործիչ, իրավաբան:

²³ Այս վկայությունը հավաստում է, որ բացի Թումանյանի տանը կազմավորված «Հնգյակից» ու «Վերնատնից», իշխանուհի Մարիամ Թումանյանի տանը կազմակերպված «Հինգշաբթիներից» եղել է նաև գրական «Քառյակ» կամ մեկ այլ «Հինգշաբթիներ» (Փիլ. Վարդապարյան, Հովհ. Թումանյան, Հովհ. Քաջագունունի և Տ. Հովհաննիսյան) անունով գրական սպոն, որը նախորդել է իշխանուհու տանը ձևավորված «Հինգշաբթիներին» (Մ. Թումանյան, Հովհ. Թումանյան, Փիլ. Վարդապարյան, Ար. Զարգարյան, Լ. Շանթ):

²⁴ Խոսքը վերաբերում է Ն. Թումանյանի թեկնածուական թեզին՝ «Թումանյանը և ռուս գրականությունը» թեմայով, որը պաշտպանել է 1956 թ. հունվարի 7-ին (տե՛ս ԹԸԱ, ՆԱ, 1, 1/ 11):

դու մի բարկացիր, որ ես այդ մասին քեզ գրում եմ: Երբ ես ընթացքում որևէ բան հիշեմ, գրի կառնեմ և հետո քեզ կուղարկեմ: Համբուրում եմ, սիրելիս:

Մենք երկու բառարան ունենք՝ մեկը Նար-Պեյինը, 1872, Փարիզ, իսկ մյուսը՝ Սամուել Գանտարյանի Ֆրանսերեն-Հայերեն-Թուրքերեն, Վենետիկ, 1836 թ.: Ես քեզ շատ երախտապարտ կլինեմ, եթե լավ գնով վաճառես դրանք՝ փողը միշտ փող է:

Ողջույններ քո ամուսնուն և բոլոր ձերոնց:

Համբուրում եմ քեզ, մորաքույր Մարուսյա» (ԹԸԱ, ՆԱ, 5, 22 /57–60):

ՄՈՒՍԱՅԱՍՏԵՂԾ ՀԱՅՈՒՆՏԻՆ

Նվարդն ուներ մարդկային ու կանացի մեծ հմայք: Պատահական չէ, որ մտավորական Հայուհու կերպարը, նրա արտաքին ու ներքին ներդաշնակ գեղեցկությունն անմահացավ Մարտիրոս Սարյանի վրձնի շնորհիվ: Բանաստեղծի դուստրը բարոյական, հայրենիքին, ընտանիքին, արվեստին, պատմությանն ու գրականությանը, չրջապատի մարդկանց հանդեպ նվիրումով ու անսահման նվիրվածությամբ չափազանց սիրված ու փնտրված անձնավորություն էր: Վաղերի Բրյուսովի կինը՝ Իոաննա Բրյուսովան (1875–1965), Նվարդին հասցեագրած 22 նամակներից²⁵ մեկում (1954 մարտի 1) ափսոսանք է հայտնում, որ եթե բանաստեղծ լիներ, սոնետ կձոներ Նվարդին: Նա Նվարդին անվանում է «ամենայն լավի ու բարության հանճար» և խոստովանում է, որ անցյալի նրա բոլոր նամակներից նուշի ու ծիրանի, հասած խաղողի ու դեղձի բույր էր առնում: Բրյուսովան գրում է. «Դուք և Թումանյանը միաձուլվել եք իմ հոգու մեջ՝ որպես երկու հանճար, Դուք որպես բարության և ամեն լավ բանի հանճար, իսկ բանաստեղծը հիշվում է իր հանճարեղության համար»²⁶:

Խոսել Նվարդի հարուստ ու բովանդակալից երիտասարդական տարիների մասին և չհիշել նրա բազմաթիվ երկրպագուներին, անհնար է: Նա իր ժամանակի մտավորական զարգացած հայուհիներից էր: Նրան բանաստեղծություններ են ձոնել Հովհ. Թումանյանը («Իմ Արուսյակ»), Լեյլի²⁷ («Աչնան շունչ»), Վաղարշակ Նորենցը («Հոկտեմբերի 3-ը. միշտ սիրելի Նվարդին»), Եղիշե Չարենցը («Նվեր Նվարդին»), Հրաչյա Աճառյանը [«Իմ երգը», «Գոհար աչքերդ սրտիս մեջ», «Վիշտ», «Զ տիվ և զ գիշեր»], Հովհաննես Շիրազը («Ասում եմ գնանք, օ, գնանք Լոռի», «Հէյ կարկաչող

²⁵ Ст'ю С. Г. О в а н е с я н. Переписка Иоанны Брюсовой с Нвард Туманян. – Брюсовские чтения 1983 г. (сборник статей). Ереван, 1985, с. 418–454.

²⁶ Նույն տեղում, էջ 432:

²⁷ Լեյլի (Փառանձեմ Սահակի Տեր-Մկրտչյան–Սահակյան) (1892, Թիֆլիս–1951, Մոսկվա), բանաստեղծուհի, թարգմանչուհի: Նա Նվարդի տարեկիցն էր, ընկերուհին ու համադասարանցին Հովհանյանի դպրոցում: Նվարդը գրում է. «Լեյլիի հետ չորրորդ դասարանից մի նստարանի վրա էինք, առաջին նստարանն էր ... Ընդունակություններով երկուսս էլ հետաքրքրվեցինք գրականությամբ ու պատմությամբ: Նա հայոց լեզվից էր ավելի ուժեղ, ես ռուսաց լեզվից, ես ավելի պատմությամբ էի հետաքրքրվում, նա՝ գրականությամբ, նա ավելի հասուն էր, հասունացած, փորձված սիրային արկածներով, տղաներով, անվերջ ռոմաններ, հանդիպումներ և սիրային բանաստեղծություններ» (ՆԱ, 1/ 46):

առուներ», Հովհաննես Կարապետյանը («Նվարդ Թումանյանին. էքսպրոմտ».
«Ձեր խոր աչքերում, անդորր աչքերում»), Դերենիկ Դեմիրճյանը («Գարուն»),
Իոսեփ Գրիգորյանը («Եվ ինչպես աղջիկն տարիքն անցած»):

Նվարդին ձոնված բանաստեղծությունների զգալի մասը պարզապես
ներբող են Թումանյանի դասեր մարդկային կերպարին: Առաջինը բանաստեղծ
Հայրիկը դասեր ալբոմում 1916 թ. հոկտեմբերի 27-ին նրան նվիրեց չափածո
տողեր՝ Հայրական քնքշությամբ («Լուսապակի իմ Արուսյակ» սկսվածքով)²⁸,
իսկ հետագայում շատ նշանավոր հայեր թողեցին այդ ալբոմում իրենց սրտի
խոսքը: Նրանցից ոմանք գրում էին սիրահարված պատանու, ոմանք էլ
հարազատ եղբոր պես: Ահա հատվածներ այդ բանաստեղծություններից²⁹.

Եվ որպես քույրս, որ միշտ գվարթ
Այդ աղբյուրից ինձ ջուր կբերեիր,
Ձեն մոռանա երբեք քեզ, Նվարդ,
Որ արցունքս սրբեցիր երեկ
(Վ. Նորենց, 1924 հոկտեմբերի 10) (ՆԱ, 6/49):

Ասում եմ՝ գնանք, օ գնանք Լոռի
Սարերի զմրուխտ գահը բարձրանանք,
Սուգվենք դյուլթական գիրկը անտառի,
Աղբյուրների պես ձորերը սուրանք,
Օ, գնանք Լոռի, գնանք, կաղաչեմ՝
Որ Թումանյանի շունչը ես չնչեմ³⁰
(Հ. Շիրազ) (ՆԱ, 6/ 53):

Դաշտ արի դուրս գանք
Ծաղիկներ շաղ տանք
Մարգերի միջին,
Խնկենք մի նոր կյանք
(Դ. Դեմիրճյան) (ՆԱ, 6/ 41):

²⁸ Տե՛ս Հովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 1, էջ 307: Նվարդի ալբոմում ոտա-
նավորն ուներ «Իմ Արուսյակին» վերնագիրը: Բանաստեղծը նույնիսկ ծանոթագրել
էր այն՝ գրելով. «Ու աղջիկներից ամեն մեկը մի աստղ ընտրեց կամ համաստե-
ղություն. Նվարդն էլ ընտրեց Վեներան, Լուսաստղը, Արուսյակը» (նույն տեղում,
էջ 708): Այնուհետև բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվեց «Գեղար-
վեստ» հանդեսում [տե՛ս «Գեղարվեստ» (Թիֆլիս), 1921, թիվ 7, էջ 66] «Նվարդի
ալբոմից» վերնագրով: Նշենք՝ Հովհ. Թումանյանի ԵԼԺ I հատորում բանաստեղ-
ծությունը լույս է տեսել նույն վերնագրով, իսկ Նվարդի ալբոմը պահվում է Թու-
մանյանի թանգարանում (ԹԹ, գգ. 860/2):

²⁹ Այս բանաստեղծությունների հատվածները հրապարակվում են առա-
ջին անգամ:

³⁰ Ավ. Իսահակյանին ուղղված նամակում Շիրազը գրում է. «Նվարդ Թուման-
յանը (Հովհ. Թումանյանի դուստրը) խոստացավ ինձ տանել Դսեղ, բայց ահա եր-
կար սպասում եմ նրան, բայց նա ոչ լուր է տալիս, ոչ էլ երևում, որ գնանք Լոռի,
ուր գուցե մի քիչ ապաքինվեմ ...» (նամակի բնօրինակը տե՛ս Ավ. Իսահակյանի
տուն թանգարանի պահոց, թիվ 643: Այն անթվակիր է):

Ես էլ սիրեցի մի աղջիկ,
 Օ, Նվա՛րդ, Նվա՛րդ, այսօր չի ընդունում
 Այս իմ սիրտը քեզանից բացի ոչ ոքի
 (Ի. Գրիշաշվիլի. 1918 թ. նոյեմբերի 30) (ՆԱ, 6/ 32):

Նվարդի երկրպագուների թվում ամենանշանավորը Վահան Տերյանն էր, որի ջերմ սերն ու մեծ հարգանքը Նվարդի նկատմամբ գաղտնիք չեն եղել թե՛ Տերյանի կենդանության օրերին, թե՛ նրա մահից հետո: Այդ են վկայում նրանց ժամանակակիցները, որոնցից շատերը պոետի մահից հետո էլ Նվարդի մեջ որոնում էին ոչ միայն նրա հայրիկին՝ Թումանյանին, այլև Տերյանին, առնում էին երկու բանաստեղծների կարոտը հավասարապես, տեսնում երկուսի մարմնացումը: Այսպես, Անդրանիկ Հովսեփյանը³¹ Նվարդին գրում է. «Որքան ուրախ եմ, որ հնարավորություն ունեցա ծանոթանալ մոտիկից մեր ժողովրդի հանճարի դասեր հետ, որի քաղցր ու անուշ բույրն անգամ զգացել է վ. Տերյանը»³²: Եղիշե Չարենցը «Նվեր Նվարդին» (1935/1936 թ.) բանաստեղծության մեջ պարզապես արձանագրում է.

Երկու բանաստեղծ	Եվ նրանց կրտսեր
Քո մեջ են միայն	Եղբոր համար դու
Արևն իրենց վառել, –	Հրաշք ես լուսե
Լույս Մուսանների	Լապտեր լուսատու
Սոսնետի շարքում	Աչքերում քո վառ, –
Անհասանելի	Որպես ճրագում –
Բանաստեղծ երկու, –	Տեսնում եմ նրանց
Պոետ երկու մեծ,	Հուրը ճառագուն...
Երկու աստղ, Նվարդ,	Եվ նայում եմ երբ
Որոնցով ենք մենք	Աչքերիդ, Նվա՛րդ,
Աշխարհում հպարտ....	Նրանց լույսն է ջեռ
	Ճառագում Նվարդ...
Ապրում ես ինչպես	Փառք և փառք քեզ, Նվարդ,
Քնար կենդանի	Որ սիրով անհուն
Տերյանի հրկեզ	Հուրը սրբազան
Եվ Թումանյանի...	Անմար ես պահում... (ՆԱ, 6/ 64-65) ³³ :

Իսկ 1932 թ. օգոստոսի 8-ին Նվարդի ալբոմում էլ գրել էր մի քառատող.

³¹ Անդրանիկ Հովսեփյան [գրական անունը՝ Անդրանիկ Սևադա – 1914, Խնձորուտ (Տավուշի մարզ), Աճարկուտ – 1968, Երևան] – արձակագիր, դրամատուրգ, լրագրող:

³² ԹԸԱ, ՆԱ, 5, 18/85–86:

³³ Չարենցի վերը բերված բանաստեղծության այս հատվածը հրապարակվում է առաջին անգամ: Այն սևագիր է և ամբողջությամբ պահպանվում է ԹԸԱ-ում: Ամենայն հավանականությամբ, թվագրված է Նվարդի հիշողությամբ (1935/1936 թթ., 110 տող): Բանաստեղծությունը Նվարդն արտագրել է Չարենցի ձեռագիր տարբերակից: Չարենցի ինքնագրի պահպանման վայրը մեզ հայտնի չէ, իսկ Նվարդի ինքնագիրը տե՛ս ՆԱ, 8/57–62:

Շրջել է այստեղ Տերյանը,
Մշուշը նրան գուրգուրել է,
Անհուն է օրերի երգարանը³⁴
Եվ երգ են անցած օրերը³⁴:

Ուշագրավ է, որ հենց Չարենցն էր 1931 թ. համոզում Նվարդին հրապարակել Տերյանից ստացած նամակները «Նոր ուղի» ամսագրում, որը խմբագրում էին Չարենցն ու Բակունցը: Չարենցն էր հորդորում Նվարդին հուշեր գրել Տերյանի մասին. «Կգրես ու ինձ կնվիրես»³⁵, – ասում էր նա:

Անշուշտ, գեղարվեստական տեսակետից անմրցելի են Նվարդին ձեռնարկած Տերյանի բանաստեղծություններն ու տրիտեաների շարքը: 1915 թ. հուլիսին բանաստեղծը Պետերբուրգից Նվարդին գրում է. «Ես մի քանի տրիտետ էի գրել Ձեզ համար, իմ սիրելի և լավ Նվարդ ... Ուզում էի, որ «տրիտետների մանյակ» լինի դա»³⁶: Եվ XX դ. ամենանուրբ հայ քնարերգուն, հավերժ մարդկային հույզերի ու մտքերի, անհասանելի սիրո, կորստյան մատնված հուրերի, հոգու կարոտների, տխրության, բայց և հույսի, թախծոտ լուսնի լույսի ու անաղմուկ խոսքերի երգիչը հրաշալի բանաստեղծություններ ձեռնեց Նվարդին, որոնցից են «Երգն այս անգոր ու անգարդ», «Սրտիս հուշերը բարի են դեռ», «Պատի մնա միշտ ժպտուն ու վառ», «Հիմա բացվում են այդտեղ վարդեր», «14 տող», «Մի տրտնջալ վշտիդ համար՝ սիրո առատ աղբյուր է նա» և այլն:

Նվարդին նվիրված բանաստեղծությունները տարբեր լեզուներով են հայերեն, ռուսերեն, վրացերեն և նույնիսկ՝ գրաբար: Վերջինիս հեղինակը անվանի լեզվաբան Հ. Աճառյանն է:

Նայիս ընդ իս աչոք բացօք
Նայիս ընդ քեզ աչոք թացօք,
Դու լուռ ես միշտ և ոչ խօսիս,
Այլ ձայն քո լուռ լինի յոգիս (Նա, 8/10):

Ամենևին պատահական չէ, որ Նվարդը կարողանում էր գրավել, ոգևորել ու խանդավառել տարբեր բանաստեղծների և նույնիսկ ոչ բանաստեղծների: Նա ինքը բանաստեղծության սիրահար էր և քնարական հոգու տեր: Նվարդը փորձել է ուժերը գեղարվեստական և տողացի թարգմանությունների ասպարեզում: Դեռևս 1910-ական թվականներին նա թարգմանել է Իվան Նաժդինի³⁷ «Ի՞նչ են ասում աստղերը» բանաստեղծությունը: Նվարդը նաև

³⁴ Ն. Թումանյան. Մեր հանդիպումներից. – Հուշեր Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1986, էջ 362: Հիշյալ տողերը Տերյանի մասին Լենինգրադում 1932 թ. օգոստոսի 8-ին Չարենցի գրած ու կորցրած Տերյանի մասին վերջին բանաստեղծության վերջին քառատողն է: Այդ մասին Չարենցը վկայում է դարձյալ Նվարդի ալբոմում (նույն տեղում):

³⁵ Այս խոսքերը Նվարդի Չարենցի մասին հուշերի այն հատվածից են, որոնք տեղ չեն գտել տպագիր հուշերում (տե՛ս ԹԼԱ, ՆԱ, «Չարենցի հետ»):

³⁶ Վ. Տերյան. Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4, Երևան, 1979, էջ 214:

³⁷ Իվան Ֆյոդորովիչ Նաժդին (1874, Վլադիմիրի նահանգ, Ռուսական կայսրություն – 1940, Բրյուսել, Բելգիա) – ռուս հրապարակախոս, գրող, ով ստեղծագործել է հիմնականում պատմական, ֆանտաստիկ ժանրերում:

Թարգմանություն է կատարել պարսիկ նշանավոր բանաստեղծ Բաբա Թահիրից: Ստորև բերում ենք մի հատված Նվարդի թարգմանությունից.

Լարն իմ տխուր քնարի
Գիսակն է քո բուրալից,
Ինչ ես արդյոք պահանջում
Իմ տառապյալ վիճակից:
Դու որ ինձ հետ, սիրուհիս,
Ընկեր լինել չես ուզում,
Ամեն գիշեր էլ ինչ³⁸
Գալիս ես ինձ երազում (ՆԱ, 2, 13/89):

Թուժանյանագիտության նվիրյալը

Մեծանուն բանաստեղծի դուստր լինելը պարտավորեցնում էր Նվարդին և մղում նրան իր ողջ ուժն ու եռանդը ներդնելու թուժանյանագիտության ասպարեզում, որի կենտրոնական ու կարևոր դեմքերից մեկն էր նա շուրջ 34 տարի:

Հակոբ Մանանդյանը 1952 թ. փետրվարի 3-ին Ավ. Իսահակյանի ներկայությամբ ասել է. «Երանի ես էլ Նվարդի պես աղջիկ ունենայի, ամեն ինչ անում է տեղը տեղին, սիրով: Երանի Հովհաննեսին, որ Նվարդի պես աղջիկ է թողել»³⁸:

Իհարկե, հարթ ու խաղաղ չի եղել Ն. Թուժանյանի կյանքն ու աշխատանքային ուղին: Եղել են նաև բազմաթիվ հիասթափություններ, անարդար վերաբերմունք: 1937-ից հետո նա ոչ միայն բանաստեղծի դուստրն էր, այլև «ժողովրդի թշնամի» եղբայրների քույրը: 1942 թ. Պատմության և գրականության ինստիտուտի տնօրենը, չհանդուրժելով Նվարդի չիտակ ու համարձակ բնավորությունը, 1942 թ. հեռացնում է նրան աշխատանքից (ՆԱ, 4, 5/18): Սակայն շատ շուտով Հովսեփ Օրբելու միջնորդությամբ Նվարդը վերականգնվում է իր պաշտոնում:

Նվարդը մեծ աշխատանք է կատարել բանաստեղծի գրած և ստացած նամակները հայտնաբերելու գործում, գրախոսել է Թուժանյանի մասին հրատարակված գրքերը և այլն: Գրականագետ Արամ Ինճիկյանը, որը երկար տարիներ աշխատել է Նվարդի հետ, նրան հասցեագրած 1939 թ. նամակներից մեկում գրում է. «Դուք արդեն շատ բան եք արել Հ. Թուժանյանի ստեղծագործությունների ուսումնասիրության համար ու ոչ միայն թուժանյանագիտության հիմքը դուք եք դրել, այլև առաջիններից եք, եթե ոչ ամենաառաջինը, որ զգացել եք մեր գրականության առանձին հեղինակների ու նրանց ստեղծագործության գիտական մասնագիտական ուսումնասիրությունները» (ՆԱ, 5, 14/43–46):

Արժեքավոր են նաև Նվարդի հուշերը թե՛ Թուժանյանի («Հուշեր և գրույցներ»), թե՛ Աղայանի, Շիրվանզադեի, Սունդուկյանի և այլ գրողների ու արվեստագետների մասին: Այդ հուշերը միաժամանակ Թուժանյան–Իսահակյան, Թուժանյան–Տերյան, Թուժանյան–Չարենց կապերի, առնչություն-

³⁸ Տե՛ս ԹԸԱ, «Ավ. Իսահակյանի մասին հուշեր»:

ների ու հարաբերությունների մասին են: Դրանցում պահպանվել են Ամենայն հայոց բանաստեղծի մասին զանազան գնահատականներ: Շատ բնական է ու հասկանալի, որ բոլորի հետ զրուցելիս Նվարդը երբեք չի մոռացել զրի առնել այն, ինչ վերաբերում էր իր հայրիկին: Ուշագրավ է Շիրազի կարծիքը. «Թումանյանը ինչը լիճը, ձեռք գցես գր, որ ավագը հանես, ծով կղառնա, մեջը կխրվես. պարզ է ու խորը» (ՆԱ, 2, 17/59): Կամ. «Հովհաննես Թումանյանը մեր Շեքսպիրն է՝ առանց դրամաներ գրելու: Նրա պոեմները դրամաներ են: Մարդ էլ կա, որ դրամա կգրի, ոտանավոր դուրս կգա» (ՆԱ, 2, 17/59): Նման կարծիքների, ինչպես նաև Թումանյանի մասին հուշ-պատմությունների, նրա ստեղծագործությունները, մարդկային նկարագրին տված բնութագրումների, այդ թվում նաև կենսագրական ու այլ բնույթի տեղեկությունների կարելի է հանդիպել Նվարդին հասցեագրված բազմաթիվ նամակներում:

Եզրակացություն

Ն. Թումանյանը իր հայրիկի մշտական ուղեկիցն էր ամենուր՝ թե՛ գրական միջավայրում, թե՛ ազգային կյանքի արյունոտ խաչմերուկներում: Իր ողջ կյանքում նա սրբորեն պահպանեց Թումանյանական ավանդները և դարձավ XX դ. 30–50-ական թվականներին Թումանյանագիտության մեծագույն նվիրյալը՝ ստաճելով վիթխարի ծավալի մի գործ, որն այն շրջանում անհնար էր նույնիսկ կոչելով ջանքերով: Նրա հիվանդանոցային վերջին օրերի մասին է պատմում ականտեսը՝ գրականագետ Զվարթ Ղուկասյանը՝ հավաստելով, որ նա խոր ցավ ու ամսոսանք էր հայտնում «Հայրիկի տարեգրությունը մնաց» և չէր սիրում տրտնջալ իր մարմնական ցավերից: Նրա կյանքի վերջին վայրկյաններն անգամ լցված էին միմիայն Թումանյանով (ՆԱ, 2, 61, 25/7, 29): Սակայն միայն մեր օրերում՝ Նվարդի մահից 70 տարի անց, Թումանյանագետների կոչելով ջանքերով կյանքի կոչվեց Թումանյանի կյանքի տարեգրությունը, «Երկերի գիտական լիակատար ժողովածուի» հատորները, որոնց վերջին հատորներին դեռ սպասում է ընթերցողը: Սակայն այն, ինչ թողեց բանաստեղծի դուստրը, մնալուն արժեք է Թումանյանագիտության համար:

Ն. Թումանյանի կյանքն ու գործը ցուցադրում են նրա ապրած շրջանում ժամանակի գրական, ազգային ու մշակութային կյանքի առօրեականությունը, լրացնում են 1910-ական թվականների երիտասարդական ազգային միությունների պատմությունը, ներկայացնում XX դ. առաջին կեսի հայ դասականների ու նշանավոր անձանց կյանքի շատ մանրամասները, օգնում բացահայտելու նրանց կյանքի ու ստեղծագործության առնչակցությունը:

Սուսաննա Հովհաննիսյան – Բ. Գ. Դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրություններ՝ հայ մշակույթի և հայ դասական գրականության պատմություն, Թումանյանագիտություն: Հեղինակ է 12 մենագրության և ավելի քան 200 գիտական հոդվածի:
sushovh@mail.ru

REFERENCES

- Ashkhen. Husher yev entanekan patmutyunner, Yerevan, 2011 (In Armenian).
 Bryusovskie chtenia 1983 goda (sbornik statey). Yerevan, 1985 (In Russian).
 E. Charentsi anvan grakanutyan yev arvesti tangaran, Tumanyani fond, № 1105 (297) (In Armenian).
 “Gegharvest” (Tiflis), 1921, tiv 7 (In Armenian).
 Zakaryan A. Rus groghnere Andrkovkasum yev hay grakan kyanke (1914–1920), Yerevan, 1984 (In Armenian).
 Zakaryan A. Sergey Gorodetskin Arevmtyan Hayastanum yev Andrkovkasum, Yerevan, 2010 (In Armenian).
 Zakaryan A. Sergey Gorodectki v Zapadnoy Armenii i v Zakavkaz’e (1916–1921 gg.). Yerevan, 2015 (In Russian).
 Tumanyan N. Husher yev zrutsner, Yerevan, 1987 (In Armenian).
 Tumanyan Hovh. Erkeri liakatar zhoghovadsu 10 hatorov, h. 1, Yerevan, 2018; h. 9, Yerevan, 1997, h. 10, Yerevan, 1999 (In Armenian).
 Husher Eghishe Charentsi masin, Yerevan, 1986 (In Armenian).
 “Hovhannes Tumanyan. Hanragitaran”, Yerevan, 2020 (In Armenian).
 Safrazbekyan I. Tumanyani entaniki kyanki ejerits, Yerevan, 2009 (In Armenian).
 Gorodetskiy S. Posledniy krik. Sostav., avtor predisl. i komment. Irma Safrazbekyan. Yerevan, 2014 (In Russian).
 Gorodetski S. Verdjin jiche, neradsutyune grets, kazm. yev dsanot. I. Safrazbekyan, Yerevan, 2010 (In Armenian).
 Teryan V. Erkeri zhoghovadsu chors hatorov, h. 4, Yerevan, 1979 (In Armenian).
 “Mshak” (Tiflis), 24. XI. 1918 (In Armenian).
 “Horizon” (Tiflis), 09. VIII. 1915; 14. VIII. 1915; 24. XI. 1918 (In Armenian).

ДОЧЬ ПОЭТА: НОВОВЫЯВЛЕННЫЕ СТРАНИЦЫ
 ИЗ СЕМЕЙНОГО АРХИВА ОВАНЕСА ТУМАНЯНА

СУСАННА ОВАНЕСЯН

Р е з ю м е

Ключевые слова: Нвард Туманян, Е. Чарени, Р. Ачарян, С. Городецкий, Ав. Исаакян, В. Терьян, М. Вардазарян, гимназия Овнанян, дневники, воспоминания, посвященные Нвард стихотворения, «Мцыри», перевод, влияние, литературная «Четверка», «Четверги».

Среди десяти детей Ованеса Туманяна своей ролью в армянской культурно-общественной жизни и особенно своим вкладом в туманяноведение выделялась Нвард Туманян (1892–1957), жизнь и деятельность которой примечательны и интересны не только потому, что она была дочерью

великого поэта, но и потому, что была яркой личностью, ученым-литературоведом, подвижником армянской культуры.

Нвард всегда отличалась деятельным участием и активной позицией в общественной и национальной жизни. До конца своей жизни она поддерживала связи с армянскими и зарубежными поэтами, переводчиками и литературоведами, занимавшимися творчеством Туманяна. Большой интерес представляет переписка Нвард с Сергеем Городецким, Иоанной Брюсовой, Иосебом Гришашвили. Ей посвящали стихи Ов. Туманян, Е. Чаренц, Ов. Шираз, Д. Демирчян и другие.

Нвард изучала творческую лабораторию Туманяна, собирала воспоминания современников о поэте, составляла подробную биографию его жизни, занималась подготовкой научных изданий литературного наследия Туманяна, научно-исследовательской работой и т. д. Дочь поэта создала непреходящие ценности для туманяноведения.

Сусанна Ованесян – д. филол. н., ведущий научный сотрудник отдела древней армянской литературы Института литературы им. М. Абегаля НАН РА. Научные интересы: история армянской культуры и армянской классической литературы, туманяноведение. Автор 12 монографий и более 200 статей и публикаций. sushovh@mail.ru

THE POET'S DAUGHTER: NEWLY REVEALED PAGES FROM HOVHANNES TUMANYAN'S FAMILY ARCHIVE

SUSANNA HOVHANISSYAN

S u m m a r y

Key words: Nvard Tumanyan, Ye. Charents, H. Acharyan, S. Gorodetsky, Av. Isahakyan, V. Teryan, M. Vardazaryan, Hovnanyan gymnasium, diaries, memoirs, poetry dedicated to Nvard, "The Novice (Mtsyri)", translation, influence, literary "Quartette", "Thursdays".

Among the ten children of Hovhannes Tumanyan Nvard Tumanyan (1892–1957) stood out for her role in the Armenian cultural and social life and especially for her contribution to the Tumanyan studies, whose life and work are remarkable and interesting not only because she was the daughter of the great poet, but also for her being a bright personality, literary scholar, devotee of Armenian culture.

By her intensive participation and an active position Nvard has always been distinguished in public and national life. Until the end of her life, she kept in touch with Armenian and foreign poets, translators and literary critics who were engaged in the study of Tumanyan's oeuvre. Nvard's correspondence with Sergei Gorodetsky, Ioanna Bryusova, Ioseb Grishashvili is of great interest. Hovh.

Tumanyan, Ye. Charents, Hovh. Shiraz, D. Demirchyan and others dedicated poems to her.

Nvard studied the creative laboratory of Tumanyan, collected the memories of contemporaries about the poet, compiled a detailed biography of his life, was engaged in the preparation of scientific publications of the literary heritage of Tumanyan, research work, etc. The poet's daughter created unprecedented values for the Tumanyan studies.

Susanna Hovhannisyan – Doctor of Sciences in Philology, Leading Researcher at the Department of Ancient Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abeghyan. Scientific interests: history of Armenian culture and classical Armenian literature, Tumanyan studies. Author of 12 monographs and over 200 scientific articles and publications.
sushovh@mail.ru